



# Զահրատ

## Մշուշ

Քոյր ե՞ս անունդ մոռցայ  
Թէ ոչ քիչ մըն ալ դուն անուն չունէիր  
Ինչո՞ւ համար կը մսէին սարփինաները բարի  
Երբ ձեռք ձեռքի կը քալէինք մշուշին մէջ որ չկար  
Յանկարծ շուրջս նայեցայ  
Չկայիր  
Քոյր ե՞ս արդեօք չտեսայ

Թէ ոչ քիչ մըն ալ դուն երբեք չկայիր  
Ի՞նչու համար կը մսէին բարի սարփինաները  
Մշուշին մէջ որ չկար  
Կը քալէինք ձեռք ձեռքի  
Միլիոնատր առաւօտներ ակնթարթի մէջ ծնան  
Կը վախնայիր կը մսէիր սարփինային պէս բարի  
Քոյր ե՞ս արդեօք չկայիր  
Թէ ոչ քիչ մըն ալ դուն կայիր առանձին

Ի՞նչու անունդ մոռցայ